



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

N63/ 07-002 - 0050 - 0318

05.09.2025թ.

2301, ք. Հրազդան, Կենտրոն 2
Էլ. փոստ kotayq@prosecutor.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ. ք. Աբովյան,
Բարեկամության հրապ., 1)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն
ընդգրկում է»

(...)

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ
գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը. (...):

Նոյն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է
հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայդնաբերում է, որ պետական կամ
լրեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային)
շահերի պաշտպանությանն առնչվող լրիվակ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով
պետական (համայնքային) շահերի խախտման վաստի մասին, դատախազի կողմից հայց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ	
Առաջին թիվ	Պ-2616
« 10 » 09 2025 թ.	

ներկայացնելու առաջարկություն սրանալուց հետո ողջամիկ ժամկետում հայց չի ներկայացրել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով
(...)»

10) դադարևական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակառակ՝ համայնքի ղեկավարի որոշումները.»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորության իրականացմանը՝ նշել է հետևյալը.

«(...) Եթե դադարևագը իր լիազորություններն իրականացնելիս հայրնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող լրվալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դադարևագի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն սրանալուց հետո համայնքի ավագանին ողջամիկ ժամկետում հայց չի ներկայացրել դադարան, ապա միայն այդ պայմաններում է դադարևագությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նոյն որոշմամբ, անդրադառնալով որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դադարևագության առաջարկի հիման վրա վարչական դատավարության կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու ժամկետներին, նշել է.

«(...) Մի շարք ղեպերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ դեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պարձառվել է գույքային վեստ:

Ուստի այն դեպքում, եթե պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող դրվագ հայց ներկայացնելը վերասպահված է որևէ պետական կամ գոելական ինքնակառավարման մարմնի, դադարիսազր, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ գոելական ինքնակառավարման մարմնին:

(...) Վճռաբեկ դադարանն արձանագրում է, որ դադարիսազի ներկայացրած առաջարկությունը սպանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դադարան դիմելու պետական կամ գոելական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիկ ժամկետով, որը դրվագայում Վճռաբեկ դադարանի գնահատմամբ պետք է հաշվարկի համապատասխան հայցարեսակի դեպքում ՀՀ վարչական դադարարության օրենսգրքով նախադրեսված ժամկետուներով:

Ընդ որում, դրվագ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դադարիսազի կողմից ներկայացված առաջարկությունը սպանալու պահով:

Այլ կերպ ասած՝ եթե պետական կամ գոելական ինքնակառավարման մարմննը սպացել է դադարիսազի առաջարկությունը՝ պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցով դադարան դիմելու վերաբերյալ, ապա դրվագ մարմինը առաջարկությունը սպանալուց հետո ՀՀ վարչական դադարարության օրենսգրքով հայց ներկայացնելու ժամկետուների պահպանմամբ պետք է դիմի ՀՀ վարչական դադարան, որպիսի ժամկետուներում ներկայացված հայցը կհամարվի ողջամիկ ժամկետում ներկայացված:

Այսինքն՝ համայնքի դեկանարի վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դադարիսազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, եթե վերջինս հայց ներկայացնելու առաջարկությունը է ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ համայնքի ավագանին ողջամիկ ժամկետում հայց չի ներկայացրել, այլ կերպ ասած՝ դրսնորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախադրեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին»:

Պետության գույքային շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է հետևյալը.

1. 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 119-Ա որոշմամբ <<Կոտայքի մարզի Արովյան համայնքի ավագանին որոշել է աճուրդային եղանակով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. 2018 թվականի մարտի 27-ին <<Կառավարության 26.05.2006 թվականի թիվ 1022-Ն որոշման հիման վրա Կոտայքի մարզի Արովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի թիվ 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ գրանցվել է <<Կոտայքի մարզի Արովյան համայնքի սեփականության իրավունքը /վկայականի համարը՝ 27032018-07-0078/:

3. 2018 թվականի ապրիլի 18-ին տեղադրվել է հայտարարություն Կոտայքի մարզի Արովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի թիվ 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրով հողամասը վաճառելու մասին:

4. 2018 թվականի մայիսի 18-ին կազմվել է արձանագրություն՝ Կոտայքի մարզի Արովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի 916,6 քմ հողամասն աճուրդով վաճառելու մասին, որի համաձայն՝

Հողամասն աճուրդով վաճառելու մասին համապատասխան որոշման համարը՝ և տարեթիվը՝ Արովյան համայնքի ավագանու 26.12.2017թ., N119-Ա,

Աճուրդի մասնակիցների թիվը՝ 2 /երկու/.

Հողամասի մեկնարկային գինը՝ 2.177.000 /երկու միլիոն երկուհարյութաթուներկու/ հազար <<դրամ,

Գնորդի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները, իրավաբանական անձի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը՝ Էդուարդ Մելիքսեթի Ավետիսյան:

Գնորդ՝ Էդուարդ Մելիքսեթի Ավետիսյան:

Աճուրդի կազմակերպիչ՝ Վահագն Գևորգյան:

Արձանագրող՝ Արամ Վաչիկի Զաքարյան»:

5. 2018 թվականի մայիսի 23-ի Կոտայքի մարզի Արովյան համայնքի դեկավարի թիվ 493 որոշմամբ Կոտայքի մարզի Արովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի 916,6 քմ մակերեսով հողամասն օտարվել է Էդուարդ Մելիքսեթի Ավետիսյան, որոշմամբ

արձանագրվել է նաև, որ քննարկվող հողամասը չի հանդիսանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս:

6. 2018 թվականի մայիսի 25-ին ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի և Եղուարդ Մելիքսեթի Ավետիսյանի միջև կնքվել է առուվաճառքի պայմանագիր և Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի 916,6 քմ մակերեսով հողամասն սեփականության իրավունքով օտարվել է Եղուարդ Մելիքսեթի Ավետիսյանին, պայմանագրի մեջ ևս նշված է, որ հողամասը չի հանդիսանում 60-րդ հոդվածով սահմանված հողամաս:

7. 2018 թվականի մայիսի 31-ին Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի հողամասի նկատմամբ գրանցվել է Եղուարդ Մելիքսեթի Ավետիսյանի սեփականության իրավունքը /թիվ 31052018-07-0091 վկայական/:

8. ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված գրության համաձայն՝ ըստ Կադաստրի կոմիտեում առկա Աբովյան քաղաքային համայնքի 2007 թվական գյուղավոր հատակագծի Էլեկտրոնային տարբերակի՝ քննարկվող հատվածն ընդգրկող տարածքը նախատեսված է «զբոսայգիներ, պուրակներ» գոտիներում: /Կից 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրով գրանցված անշարժ գույքի միավորի վերաբերյալ կադաստրային գործում առկա փաստաթղթերի լրացապատճենները և հատված քննարկվող հողամասի կադաստրային քարտեզից՝ ըստ Կադաստրի կոմիտեի Էլեկտրոնային արխիվի տվյալների/:

9. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքից ստացված այտասխան գրության համաձայն՝ 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրերով հողամասը 09-08-2007թ. թիվ 1036-Ն որոշման համաձայն՝ ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հանդիսանում են զբոսայգիների, պուրակների տարածքներ:

10. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքից ստացված պատասխան գրության համաձայն՝ 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրերով հողամասը Աբովյան համայնքի ավագանու 13.08.2024թ., թիվ 111-Ն որոշմամբ հաստատված Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի համաձայն՝ հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս՝ ընդհանուր օգտագործման տարածք:

Ուստինասիրության արդյունքում պարզվել է, որ վաճառքի է հանվել այնպիսի օբյեկտ, որը շրջանառությունում չեր կարող գտնվել, չեր կարող սեփականության իրավունքով փոխանցվել ֆիզիկական և իրավաբանական անձանց: Այսին, «Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքային համայնքի (քնակավայրի) գլխավոր հայտակագիծը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 09.08.2007թ. թիվ 1036-Ն որոշման, ինչպես նաև քաղաքաշինական այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ վեճի առարկա հանդիսացող հողամասերը հանդիսացել են գրոսայգիների, պուրակների տարածքներ, որոնք շրջանառության մեջ չեն կարող գտնվել, չեր կարող դրվել աճուրդի և օտարվել ֆիզիկական անձի, քանզի, կրկին արձանագրենք, ֆիզիկական և իրավաբանական անձինք նշված հողամասի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Բացի այդ, սույն գործով կադաստրային գործում առկա՝ աճուրդի վերաբերյալ հայտարարության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտարարության մեջ նշվել են աճուրդի կազմակերպման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հողամասի ծածկագիրը, մասնակցության վճարի չափը, նախավճարի չափը, տեղեկատվություն՝ հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չինելու վերաբերյալ և հայտերի ընդունման վերջնաժամկետը, իսկ 8-րդ հոդվածի 1-ին մասով պարտադիր իրապարակման ենթակա մնացած տեղեկություններնը, մասնավորապես՝ կազմակերպչի անունը (անվանումը), աճուրդի անցկացման վայրը, աճուրդի ծնը և անցկացման կարգը, լուսի մեկնարկային գինը, նախավճարի վճարման կարգը, աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, աճուրդում հաղթողին որոշելու կարգը, լուսն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը, կանոնակարգին ծանոթանալու վայրը, կանոնակարգի պատճեննը տրամադրելու կարգը, առկա չեն:

Բացի այդ, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Ռոսիա փողոցի 1/23 հասցեի թիվ 07-002-0050-0318 կադաստրային ծածկագրով հողամասի օտարման գործընթացը կազմակերպվել է օտարման պահին գործած «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, ՀՀ սահմանդրության 107-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ, այլ կերպ՝ հողամասը աճուրդային կարգով օտարվել է համայնքապետի 2018 թվականի մայիսի 23-ի թիվ 493 որոշման հիման վրա, որի ընդունման հիմք հանդիսացած ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 119-Ա որոշման մեջ բացակայում է ավագանու համաձայնությունը կամ թույլտվությունը նշված հողամասը աճուրդային կարգով օտարելու վերաբերյալ /ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան

համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի 119-Ա որոշման կից
ներկայացված հավելվածում բացկայում է Ռոսիա փողոցի 1/23 հասցեում առկա հողամասը:
**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ
հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» ենթակետի համաձայն՝**

«(...)

1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել

է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ դեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պես է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:»:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի՝

«(...)

1. Վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամրողությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամկող վարչական ակտը (ներսոյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամկող դրույթները):

2. Եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամկող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ վկացված միջամկող վարչական ակտի վիճարկման պահանջ:»:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի՝

«Վիճարկման, պարզավորեցման, գործողության կարարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ ընդունելու հետևանքով:»:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ որոշմամբ խախտվել են համայնքի շահերը, ուստի առաջարկում եմ համայնքային շահի պաշտպանության նպատակով սույն առաջարկությունը սրանալու պահից մեկամսյա ժամկետում հայց հարուցել իրավասու դատարան և հարուցված հայցի մասին նոյն օրը հայտնել **ՀՀ Կոտայքի մարզի դատավագություն**, իսկ հայց

չհարուցելու պարագայում նոյն ժամկետում այդ մասին տեղեկացնել ՀՀ Կոտայքի մարզի դատախազությանը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մեկամյա ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունը ձեռնամուխ կլինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայց հարուցելու լիազորության իրացմանը:

Հարգանքով՝

**Կուրայքի մարզի դատախազության
դատախազ՝**

Եղմոնդ Գրիգորյան

